

«Նապոլեոն Բոնապարտ» հավաքածուի նվիրատվություն

Հայաստանի ազգային գրադարանի օրվա ծրագրի շրջանակներում Անձենմխելի գրականության քառնի ընթերցասրահում տեղի ունեցավ Գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Ռուբեն Բաղայանի կողմից Ազգային գրադարանին նվիրաբերված 290 միավոր «Նապոլեոն Բոնապարտ» հավաքածուի ներկայացում: Հավաքածուն ներառում է Նապոլեոնի գործունեությանը նվիրված, Նապոլեոնին որպես հանճարեղ զորավարի բնութագրող գրականություն, բացի այդ ընդգրկում է հուշագրություններ, եվրոպական նշանավոր պատմաբանների՝ Նապոլեոնին նվիրված ուսումնասիրություններ: Ավելացնենք, որ գրադարանը բազմալեզու է: Կա ֆրանսերեն, հայերեն, ռուսերեն, անգլերեն, պարսկերեն լեզուներով գրականություն: ՀԱԳ տնօրեն Տիգրան Զարգարյանը գրադարանի կողմից շնորհակալական խոսք ասաց Ռուբեն Բաղայանին՝ արժեքավոր գրականության նվիրատվության համար: